ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ք.Երևան «14» հոկտեմբերի 2021թ.

ՀՐԱՄԱՆ № 069-Ա

ԿԱՐԵՆ ԿԱՄՈՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ 41-27.1-Ղ3-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը և Կարեն Հակոբյանի անձնական դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կարեն Կամոյի Հակոբյանին նշանակել հայտարարագրերի վերլուծության վարչության պետի պաշտոնին (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Ղ3-1):
2. Փորձաշրջանի ընթացքում Կարեն Հակոբյանի փորձաշրջանի համակարգող նշանակել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչության պետ (ծածկագիր՝ 41-27.6-Ղ3-1)՝ Մարիաննա Բաղինյանին:
3. Կարեն Կամոյի Հակոբյանին պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
4. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2021 թվականի հոկտեմբերի 15:

Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ